**Բանալի բառեր՝** գործոնային վերլուծություն, հարկային բեռ, հարկային եկամուտներ, ՀՆԱ:

ՀՏԴ 336.22

# ՀՀ ՀՆԱ-Ի, ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

*Ատենախոսության թեմա՝*
***Հարկային բեռը և դրա մակրոտնտեսական գնահատումը ՀՀ-ում***

*Գիտական ղեկավար՝*
***Աշոտ ԲԱՅԱՂՅԱՆ***
***Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր***

**Նարեկ ՔԱՐԴՈՒՄՅԱՆ**
*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ՀՀ պետական բյուջեի կազմի և կառուցվածքի կարգավորման հետ կապված կարևորվում է հարկային եկամուտների և ՀՆԱ-ի միջև գործոնային վերլուծությունը: Ուստի այդ նպատակով փորձենք բացահայտել դրանց ունեցած ազդեցությունը հարկային բեռի վրա[1]: Այսպես, ընդհանուր հարկային եկամուտների և առանձին հարկատեսակի գծով հարկային եկամուտների ունեցած ազդեցությունը գնահատելու համար կատարենք դրանց՝ ընթացիկ և նախորդ տարվա ցուցանիշների ու ՀՆԱ-ի համեմատական վերլուծություն: Ասվածը ներկայացնենք հետևյալ հավասարման միջոցով՝

$$\text{ՀԲՓ}_{\text{հե}} = \text{ՀԵ}_{\text{ըտ}} / \text{ՀՆԱ}_{\text{նտ}} - \text{ՀԵ}_{\text{նտ}} / \text{ՀՆԱ}_{\text{նտ}} \quad (1),$$

որտեղ՝

$\text{ՀԲՓ}_{\text{հե}}$ - ն՝ հարկային բեռի փոփոխությունն է՝ կախված ընդհանուր հարկային եկամուտների փոփոխությունից,
$\text{ՀԵ}_{\text{ըտ}}$ – ն՝ ընթացիկ տարվա ընդհանուր հարկային եկամուտներն են,
$\text{ՀՆԱ}_{\text{նտ}}$ - ն՝ նախորդ տարվա ընդհանուր ՀՆԱ-ն է,
$\text{ՀԵ}_{\text{նտ}}$ - ն՝ նախորդ տարվա ընդհանուր հարկային եկամուտներն են:

Իսկ առանձին հարկատեսակի գծով հարկային եկամուտների դեպքում հարկային բեռի վրա ազդեցությունը կարտահայտվի հետևյալ հավասարման տեսքով՝

$$\text{ՀԲՓ}_{\text{ահ}} = (\text{ՀԵ}_{\text{նտ}} - \text{ԱՀ}_{\text{նտ}} + \text{ԱՀ}_{\text{ըտ}}) / \text{ՀՆԱ}_{\text{նտ}} - \text{ՀԵ}_{\text{նտ}} / \text{ՀՆԱ}_{\text{նտ}} \quad (2),$$

որտեղ՝

$\text{ՀԲՓ}_{\text{ահ}}$ - ն՝ հարկային բեռի փոփոխությունն է՝ կախված առանձին հարկատեսակի գծով հարկային եկամուտների փոփոխությունից,
$\text{ԱՀ}_{\text{նտ}}$ - ն՝ առանձին հարկատեսակի գծով նախորդ տարվա հարկային եկամուտներ են,
$\text{ԱՀ}_{\text{ըտ}}$ - ն՝ առանձին հարկատեսակի գծով ընթացիկ տարվա հարկային եկամուտներ են:

Ընդհանուր ՀՆԱ-ի և դրա առանձին բաղադրիչի ունեցած ազդեցությունը հարկային բեռի վրա գնահատելու համար ներկայացնենք հետևյալ հավասարումը՝

$$\text{ՀԲՓ}_{\text{ՀՆԱ}} = \text{ՀԵ}_{\text{ըտ}} / \text{ՀՆԱ}_{\text{ըտ}} - \text{ՀԵ}_{\text{ըտ}} / \text{ՀՆԱ}_{\text{նտ}} \quad (3),$$

որտեղ՝

$\text{ՀԲՓ}_{\text{ՀՆԱ}}$ - ն՝ հարկային բեռի փոփոխությունն է՝ կախված ընդհանուր ՀՆԱ-ի փոփոխությունից,
$\text{ՀՆԱ}_{\text{ըտ}}$ - ն՝ ընթացիկ տարվա ընդհանուր ՀՆԱ-ն է:

Իսկ հարկային բեռի վրա ընդհանուր ՀՆԱ-ի առանձին բաղադրիչի ազդեցության դեպքում կիրառենք երկու տարբերակ:

1. $$\text{ՀԲՓ}_{\text{աբ(1)}} = \text{ՀԵ}_{\text{ըտ}} / (\text{ՀՆԱ}_{\text{նտ}} - \text{ԱԲ}_{\text{նտ}} + \text{ԱԲ}_{\text{ըտ}}) - \text{ՀԵ}_{\text{ըտ}} / \text{ՀՆԱ}_{\text{նտ}} \quad (4),$$

որտեղ՝

$\text{ՀԲՓ}_{\text{աբ(1)}}$ - ն՝ հարկային բեռի փոփոխությունն է՝ կախված ընդհանուր ՀՆԱ-ի առանձին բաղադրիչի փոփոխությունից,
$\text{ԱԲ}_{\text{նտ}}$ - ն՝ ընդհանուր ՀՆԱ-ի առանձին բաղադրիչի գծով նախորդ տարվա ՀՆԱ-ն է,
$\text{ԱԲ}_{\text{ըտ}}$ - ն՝ ընդհանուր ՀՆԱ-ի առանձին բաղադրիչի գծով ընթացիկ տարվա ՀՆԱ-ն է:

2. $$\text{ՀԲՓ}_{\text{աբ(2)}} = (\text{ԱԲ}_{\text{ըտ}} - \text{ԱԲ}_{\text{նտ}}) / (\text{ՀՆԱ}_{\text{ըտ}} - \text{ՀՆԱ}_{\text{նտ}}) \times \text{ՀԲՓ}_{\text{ՀՆԱ}} \quad (5):$$

[1] Մեթոդաբանության մի մասը՝ ըստ Bunescu Liliana, Comaniciu Carmen, Factorial analysis of fiscal pressure in Romania: 2008 - 2011, Revista economică, Volume 65, Issue 1, Year 2013, Journal of economic-financial theory and practice, page 90, http://economice.ulbsibiu.ro/revista.economica/archive/65100revistaeconomica.pdf

Վերջին երկու մոտեցումներով գնահատենք նաև սպառման, համախառն կուտակման և արտահանման ու ներմուծման ունեցած ազդեցությունը հարկային բեռի վրա: Պարզաբանման համար նշենք, որ սկսած 2015թ.-ից ՀՆԱ-ի ցուցանիշը ՀՀ ԱՎԾ կողմից հաշվարկվում է համաձայն Ազգային հաշիվների համակարգ 2008թ. (ԱՀՀ 2008թ.) միջազգային ստանդարտի և ըստ ԱՀՀ 2008թ.-ի վերանայվել են նաև 2013-2014թթ. ՀՆԱ-ի ցուցանիշները, որոնք համադրելի չեն 2000-2012թթ. ՀՆԱ-ի ցուցանիշների հետ, որոնք հաշվարկված են համաձայն Ազգային հաշիվների համակարգ 1993թ. (ԱՀՀ 1993թ.) ստանդարտի[2]: Միաժամանակ, ըստ ԱՀՀ 2008թ. միջազգային ստանդարտի արտադրական եղանակով ՀՆԱ-ի տվյալներն ու ծախսային (եկամուտների օգտագործման) եղանակով ՀՆԱ-ի օգտագործումը ՀՀ ԱՎԾ-ի կողմից ներկայացված են 2014թ.-ի, 2015թ.-ի և 2016թ.-ի կտրվածքով, ինչպես նաև արտադրական եղանակով ՀՆԱ-ի տվյալները 2010թ.-ին ներկայացվել են ըստ ԵՀՀ 95 Ա 17 խմբավորման, իսկ սկսած 2011թ.-ից՝ ըստ ՏԳՏՀԴ խմբ. 2-ի: Վերոնշյալը հիմնավորելու համար կատարենք համապատասխան վերլուծություններ երկու ժամանակահատվածի՝ 2011-2014թթ.-ի (ԱՀՀ 1993) և 2014-2016թթ.-ի (ԱՀՀ 2008) կտրվածքով: Արդյունքում կստացվի հետևյալ պատկերը (աղյուսակ 1 և 2)՝

**Աղյուսակ 1**
**Հարկային եկամուտների և ՀՆԱ-ի ունեցած ազդեցությունը հարկային բեռի վրա 2014-2016թթ. (ԱՀՀ 2008) (մլրդ. ՀՀ դրամ)[3]**

| Անվանումներ | 2014 | 2015 | 2016 | Հարկային բեռի փոփոխությունը, տոկոսային կետ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2015/2014 | | 2016/2015 | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | 6 | |
| Հարկային եկամուտներ | 1,064.10 | 1,067.90 | 1,079.70 | 0.08 | | 0.23 | |
| Շահութահարկ | 103.6 | 103.7 | 127.2 | 0.00 | | 0.47 | |
| Եկամտային հարկ | 301.6 | 320.2 | 332.8 | 0.39 | | 0.25 | |
| ԱԱՀ | 440.6 | 423.9 | 391.1 | -0.35 | | -0.65 | |
| Ակցիզային հարկ | 51.7 | 49 | 59.7 | -0.06 | | 0.21 | |
| Այլ հարկային եկամուտներ | 166.6 | 171.1 | 168.9 | 0.09 | | -0.04 | |
| - | | | | | | | |
| ՀՆԱ | 4828.6 | 5043.6 | 5079.9 | -0.94 | | -0.15 | |
| - | | | | Տարբերակ | | | |
| | | | | 1 | 2 | 1 | 2 |
| Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ) | 546.3 | 535.8 | 508.7 | 0.05 | 0.05 | 0.12 | 0.11 |
| Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով) | 4282.3 | 4507.8 | 4571.2 | -0.99 | -0.99 | -0.27 | -0.27 |
| ՖՄԱՉԾ | -100.0 | -89.2 | -92.1 | -0.05 | -0.05 | 0.01 | 0.01 |
| Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն | 872.6 | 868.7 | 809.7 | 0.02 | 0.02 | 0.25 | 0.25 |
| Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում | 102.6 | 107.7 | 132.4 | -0.02 | -0.02 | -0.10 | -0.10 |
| Մշակող արդյունաբերություն | 466.8 | 464.3 | 466.6 | 0.01 | 0.01 | -0.01 | -0.01 |
| Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում | 188.0 | 231.3 | 228.4 | -0.20 | -0.19 | 0.01 | 0.01 |
| Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում | 14.1 | 19.2 | 22.5 | -0.02 | -0.02 | -0.01 | -0.01 |
| Շինարարություն | 448.8 | 474.1 | 406.2 | -0.12 | -0.11 | 0.29 | 0.29 |
| Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում | 570.4 | 551.5 | 537.8 | 0.09 | 0.08 | 0.06 | 0.06 |
| Փոխադրումներ և պահեստային տնտեսություն | 144.5 | 125.9 | 129.9 | 0.09 | 0.08 | -0.02 | -0.02 |
| Կացության և հանրային սննդի կազմակերպում | 55.1 | 60.3 | 66.2 | -0.02 | -0.02 | -0.03 | -0.03 |
| Տեղեկատվություն և կապ | 162.2 | 170.9 | 166.4 | -0.04 | -0.04 | 0.02 | 0.02 |
| Ֆինանսական և ապահովագրական գործունեություն | 206.6 | 196.3 | 205.4 | 0.05 | 0.05 | -0.04 | -0.04 |
| Անշարժ գույքի հետ կապված գործունեություն | 403.7 | 437.5 | 491.2 | -0.15 | -0.15 | -0.23 | -0.23 |
| Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն | 53.6 | 58.3 | 57.1 | -0.02 | -0.02 | 0.01 | 0.00 |
| Վարչարարական և օժանդակ գործունեություն | 41.2 | 41.8 | 43.0 | 0.00 | 0.00 | -0.01 | -0.01 |

[2] http://armstat.am/am/?nid=12&id=01001

[3] Հարկային եկամուտների վերաբերյալ 2016թ.-ի, 2015թ.-ի և 2014թ.-ի տվյալները՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գործունեության տարեկան հաշվետվություն 2016, էջ 3 (ընդհանուր հարկային եկամուտներ), էջ 9 (ԱԱՀ), էջ 10 (շահութահարկ), էջ 12 (եկամտային հարկ) և էջ 15 (ակցիզային հարկ)
ՀՆԱ-ի վերաբերյալ 2016թ.-ի և 2015թ.-ի տվյալները՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏԻՆ, տեղեկատվական ամսական զեկույց Երևան 2017, էջ 11-12 (արտադրական եղանակով), էջ 28 և 31 (ծախսային (եկամուտների օգտագործման) եղանակով)
ՀՆԱ-ի վերաբերյալ 2014թ.-ի տվյալները՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏԻՆ, տեղեկատվական ամսական զեկույց Երևան 2016, էջ 11-12 (արտադրական եղանակով) և էջ 28 (ծախսային (եկամուտների օգտագործման) եղանակով)

Աղյուսակ 1-ի շարունակությունը

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պետական կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովագրություն | 207.9 | 244.6 | 260.2 | -0.17 | -0.16 | -0.07 | -0.07 |
| Կրթություն | 136.8 | 148.4 | 144.7 | -0.05 | -0.05 | 0.02 | 0.02 |
| Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում | 185.9 | 198.2 | 208.0 | -0.06 | -0.05 | -0.04 | -0.04 |
| Մշակույթ, զվարճություններ և հանգիստ | 89.0 | 163.3 | 245.2 | -0.33 | -0.33 | -0.34 | -0.35 |
| Սպասարկման այլ ծառայություններ | 29.6 | 31.9 | 39.4 | -0.01 | -0.01 | -0.03 | -0.03 |
| Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու. տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայություն-ների արտադրություն սեփական սպառման համար | 2.8 | 2.9 | 2.8 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Վերջնական սպառման ծախսեր | 4,714.3 | 4,599.4 | 4,617.1 | 0.54 | 0.50 | -0.08 | -0.07 |
| Տնային տնտեսությունների | 4,110.2 | 3,916.0 | 3,887.7 | 0.93 | 0.85 | 0.12 | 0.12 |
| Պետական հիմնարկների, որոնք բավարարում են | 583.6 | 661.3 | 705.7 | -0.35 | -0.34 | -0.19 | -0.19 |
| Բնակչության անհատական պահանջմունքները | 228.1 | 254.1 | 248.1 | -0.12 | -0.11 | 0.03 | 0.02 |
| Կոլեկտիվ պահանջմունքները | 355.5 | 407.2 | 457.6 | -0.23 | -0.23 | -0.21 | -0.21 |
| Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների | 20.5 | 22.1 | 23.7 | -0.01 | -0.01 | -0.01 | -0.01 |
| Համախառն կուտակում | 1,007.8 | 1,045.6 | 936.9 | -0.17 | -0.17 | 0.47 | 0.46 |
| Հիմնական միջոցների համախառն կուտակում | 965.5 | 1,039.6 | 903.6 | -0.33 | -0.33 | 0.59 | 0.57 |
| Նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն | 42.3 | 5.9 | 33.3 | 0.17 | 0.16 | -0.12 | -0.12 |
| Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման սալդո | -892.4 | -612.2 | -515.1 | -1.21 | -1.23 | -0.40 | -0.41 |
| Արտահանում | 1,379.3 | 1,499.4 | 1,679.6 | -0.54 | -0.53 | -0.74 | -0.76 |
| Ներմուծում | 2,271.7 | 2,111.5 | 2,194.7 | -0.76 | -0.70 | 0.35 | 0.35 |
| Վիճակագրական շեղում | -1.1 | 10.8 | 40.9 | -0.05 | -0.05 | -0.13 | -0.13 |
| Հարկային բեռ, % | 22.04 | 21.17 | 21.25 | - | | | |
| Հարկային բեռի փոփոխություն, տոկոսային կետ | - | -0.86 | 0.08 | | | | |

Այսպիսով, աղյուսակ 2-ում կատարված վերլուծությունից պարզ է դառնում, որ 2016թ.-ին հարկային եկամուտների աճի հետևանքով հարկային բեռը ավելացել է 0.23 տոկոսային կետով, իսկ ՀՆԱ-ի աճի հետևանքով՝ նվազել 0.15 տոկոսային կետով: Հարկային եկամուտներից հարկային բեռի վրա առավել էական ազդեցություն են ունեցել ԱԱՀ-ն ու շահութահարկը: ԱԱՀ-ի նվազման հետևանքով հարկային բեռը նվազել է 0.65 տոկոսային կետով, իսկ շահութահարկի աճի հետևանքով՝ ավելացել 0.47 տոկոսային կետով: Եկամտային հարկի և ակցիզային հարկի աճի հետևանքով հարկային բեռը ավելացել է համապատասխանաբար 0.25 և 0.21 տոկոսային կետով: Արտադրական եղանակով ՀՆԱ-ի կտրվածքով հարկային բեռի վրա առավել էական ազդեցություն են ունեցել հետևյալ ոլորտները (տարբերակ 1 և 2). Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն՝ 0.25-ական տոկոսային կետ, հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում՝ -0.1-ական տոկոսային կետ, շինարարություն՝ 0.29-ական տոկոսային կետ, անշարժ գույքի հետ կապված գործունեություն՝ -0.23-ական տոկոսային կետ: Ծախսային (եկամուտների օգտագործման) եղանակով ՀՆԱ-ի կտրվածքով հարկային բեռի վրա առավել էական ազդեցություն են ունեցել հետևյալ բաղադրիչները. տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսեր՝ 0.12-ական տոկոսային կետ, պետական հիմնարկների վերջնական սպառման ծախսեր՝ -0.19-ական տոկոսային կետ, համախառն կուտակում՝ 0.47 և 0.46 տոկոսային կետ, արտահանում՝ -0.74 և -0.76 տոկոսային կետ, ներմուծում՝ 0.35-ական տոկոսային կետ:

**Աղյուսակ 2**
**Հարկային եկամուտների և ՀՆԱ-ի ունեցած ազդեցությունը հարկային բեռի վրա**
**2011-2014թթ. (ԱՀՀ 1993) (մլրդ. ՀՀ դրամ)[4]**

| Անվանումներ | 2011 | 2012 | 2013 | 2014 | **Հարկային բեռի փոփոխություն, տոկոսային կետ** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 2012/2011 | | 2013/2012 | | 2014/2013 | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | 7 | | 8 | |
| Հարկային եկամուտներ | 777.40 | 878.4 | 1,000.9 | 1,064.1 | 2.67 | | 3.06 | | 1.48 | |
| Շահութահարկ | 98.12 | 118.7 | 124.6 | 103.6 | 0.54 | | 0.15 | | -0.49 | |
| Եկամտային հարկ | 204.66 | 220.7 | 274.5 | 301.6 | 0.42 | | 1.34 | | 0.63 | |
| ԱԱՀ | 328.51 | 369.1 | 401.3 | 440.6 | 1.07 | | 0.80 | | 0.92 | |
| Ակցիզային հարկ | 39.40 | 50.2 | 53.0 | 51.7 | 0.29 | | 0.07 | | -0.03 | |
| Այլ հարկային եկամուտներ | 106.71 | 119.7 | 147.5 | 166.6 | 0.34 | | 0.69 | | 0.45 | |
| | | | | | | | | | | - |
| ՀՆԱ | 3,777.9 | 4,000.7 | 4,276.2 | 4,528.9 | -1.29 | | -1.61 | | -1.39 | |
| - | | | | | Տարբերակ | | | | | |
| | | | | | 1 | 2 | 1 | 2 | 1 | 2 |
| Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ) | 412.3 | 458.2 | 506.4 | 546.2 | -0.28 | -0.27 | -0.30 | -0.28 | -0.23 | -0.22 |
| Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով) | 3,365.6 | 3,542.5 | 3,769.8 | 3,982.6 | -1.04 | -1.03 | -1.34 | -1.33 | -1.18 | -1.17 |
| ՖՄԱՉԾ | -96.2 | -109.0 | -124.0 | -128.8 | 0.08 | 0.07 | 0.09 | 0.09 | 0.03 | 0.03 |
| Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն | 767.9 | 763.9 | 839.8 | 893.9 | 0.02 | 0.02 | -0.47 | -0.44 | -0.31 | -0.30 |
| Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում | 102.8 | 114.3 | 102.7 | 101.2 | -0.07 | -0.07 | 0.07 | 0.07 | 0.01 | 0.01 |
| Մշակող արդյունաբերություն | 399.3 | 397.5 | 433.8 | 455.7 | 0.01 | 0.01 | -0.22 | -0.21 | -0.13 | -0.12 |
| Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում | 131.2 | 154.0 | 183.1 | 207.2 | -0.14 | -0.13 | -0.18 | -0.17 | -0.14 | -0.13 |
| Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում | 14.5 | 13.7 | 13.2 | 13.4 | 0.01 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Շինարարություն | 491.1 | 498.0 | 476.6 | 442.0 | -0.04 | -0.04 | 0.13 | 0.13 | 0.20 | 0.19 |
| Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում | 476.7 | 508.6 | 540.7 | 557.9 | -0.19 | -0.19 | -0.20 | -0.19 | -0.10 | -0.09 |
| Փոխադրումներ և պահեստային տնտեսություն | 117.4 | 130.6 | 120.1 | 127.4 | -0.08 | -0.08 | 0.07 | 0.06 | -0.04 | -0.04 |
| Կացության և հանրային սննդի կազմակերպում | 27.0 | 36.1 | 44.3 | 51.6 | -0.06 | -0.05 | -0.05 | -0.05 | -0.04 | -0.04 |
| Տեղեկատվություն և կապ | 135.3 | 145.9 | 151.0 | 161.9 | -0.06 | -0.06 | -0.03 | -0.03 | -0.06 | -0.06 |
| Ֆինանսական և ապահովագրական գործունեություն | 151.9 | 180.6 | 200.8 | 209.9 | -0.18 | -0.17 | -0.13 | -0.12 | -0.05 | -0.05 |

[4] Հարկային եկամուտների վերաբերյալ 2013թ.-ի տվյալները՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գործունեության տարեկան հաշվետվություն 2015, էջ 4 (ընդհանուր հարկային եկամուտներ), էջ 9 (ԱԱՀ), էջ 11 (շահութահարկ), էջ 13 (եկամտային հարկ) և էջ 18 (ակցիզային հարկ)
Հարկային եկամուտների վերաբերյալ 2012թ.-ի տվյալները՝ ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գործունեության տարեկան հաշվետվություն 2014, էջ 3 (ընդհանուր հարկային եկամուտներ), էջ 10 (ԱԱՀ), էջ 11 (շահութահարկ), էջ 13 (եկամտային հարկ) և էջ 18 (ակցիզային հարկ)
Հարկային եկամուտների վերաբերյալ 2011թ.-ի տվյալները՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ տարեկան հաշվետվություն 2012, էջ 4 (ընդհանուր հարկային եկամուտներ), էջ 7 (ԱԱՀ), էջ 9 (շահութահարկ), էջ 10 (ակցիզային հարկ), էջ 13 և 21 (եկամտային հարկ)
ՀՆԱ-ի վերաբերյալ 2014թ.-ի և 2013թ.-ի տվյալները՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏԻՆ, տեղեկատվական ամսական զեկույց Երևան 2015, էջ 11-12 (արտադրական եղանակով), էջ 28 և 31 (ծախսային (եկամուտների օգտագործման) եղանակով)
ՀՆԱ-ի վերաբերյալ 2012թ.-ի տվյալները՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏԻՆ, տեղեկատվական ամսական զեկույց Երևան 2014, էջ 11-12 (արտադրական եղանակով) և էջ 27 (ծախսային (եկամուտների օգտագործման) եղանակով)
ՀՆԱ-ի վերաբերյալ 2011թ.-ի տվյալները՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏԻՆ, տեղեկատվական ամսական զեկույց Երևան 2013, էջ 11-12 (արտադրական եղանակով) և էջ 27 (ծախսային (եկամուտների օգտագործման) եղանակով)

Աղյուսակ 2-ի շարունակությունը

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Անշարժ գույքի հետ կապված գործունեություն | 101.0 | 115.2 | 131.2 | 157.9 | -0.09 | -0.08 | -0.10 | -0.09 | -0.15 | -0.15 |
| Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն | 44.1 | 41.3 | 45.8 | 49.9 | 0.02 | 0.02 | -0.03 | -0.03 | -0.02 | -0.02 |
| Վարչարարական և օժանդակ գործունեություն | 38.4 | 41.4 | 38.4 | 41.2 | -0.02 | -0.02 | 0.02 | 0.02 | -0.02 | -0.02 |
| Պետական կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովագրություն | 141.8 | 149.9 | 174.2 | 191.7 | -0.05 | -0.05 | -0.15 | -0.14 | -0.10 | -0.10 |
| Կրթություն | 120.7 | 125.8 | 129.9 | 136.5 | -0.03 | -0.03 | -0.03 | -0.02 | -0.04 | -0.04 |
| Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում | 138.7 | 149.0 | 174.8 | 185.6 | -0.06 | -0.06 | -0.16 | -0.15 | -0.06 | -0.06 |
| Մշակույթ, զվարճություններ և հանգիստ | 36.6 | 55.5 | 61.2 | 92.0 | -0.12 | -0.11 | -0.04 | -0.03 | -0.18 | -0.17 |
| Սպասարկման այլ ծառայություններ | 23.4 | 28.6 | 29.3 | 31.9 | -0.03 | -0.03 | 0.00 | 0.00 | -0.02 | -0.01 |
| Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու. տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադ-րություն սեփական սպառման համար | 1.8 | 1.6 | 3.0 | 2.7 | 0.00 | 0.00 | -0.01 | -0.01 | 0.00 | 0.00 |
| - | | | | | | | | | | |
| Վերջնական սպառման ծախսեր | 3,649.4 | 4,047.9 | 4,379.2 | 4,597.6 | -2.22 | -2.32 | -1.91 | -1.94 | -1.21 | -1.20 |
| Տնային տնտեսությունների | 3,144.5 | 3,520.0 | 3,758.1 | 3,905.8 | -2.10 | -2.18 | -1.41 | -1.39 | -0.83 | -0.81 |
| Պետական հիմնարկների, որոնք բավարարում են | 488.4 | 509.5 | 601.1 | 675.0 | -0.13 | -0.12 | -0.56 | -0.54 | -0.42 | -0.41 |
| Բնակչության անհատական պահանջմունքները | 195.4 | 198.7 | 218.2 | 232.0 | -0.02 | -0.02 | -0.12 | -0.11 | -0.08 | -0.08 |
| Կոլեկտիվ պահանջմունքները | 293.0 | 310.8 | 383.0 | 443.0 | -0.11 | -0.10 | -0.44 | -0.42 | -0.34 | -0.33 |
| Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների | 16.5 | 18.4 | 20.0 | 16.9 | -0.01 | -0.01 | -0.01 | -0.01 | 0.02 | 0.02 |
| Համախառն կուտակում | 1,030.6 | 1,016.5 | 937.6 | 941.6 | 0.09 | 0.08 | 0.50 | 0.46 | -0.02 | -0.02 |
| Հիմնական միջոցների համախառն կուտակում | 985.9 | 942.7 | 889.7 | 892.5 | 0.27 | 0.25 | 0.34 | 0.31 | -0.02 | -0.02 |
| Նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն | 44.8 | 73.8 | 47.9 | 49.2 | -0.18 | -0.17 | 0.16 | 0.15 | -0.01 | -0.01 |
| Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման սալդո | -891.5 | -991.0 | -899.7 | -901.2 | 0.63 | 0.58 | -0.56 | -0.53 | 0.01 | 0.01 |
| Արտահանում | 897.5 | 983.2 | 1,153.2 | 1,414.9 | -0.52 | -0.50 | -1.02 | -1.00 | -1.43 | -1.44 |
| Ներմուծում | -1,789.0 | -1,974.2 | -2,053.0 | -2,316.1 | 1.09 | 1.08 | 0.48 | 0.46 | 1.44 | 1.45 |
| Վիճակագրական շեղում | -10.6 | -72.7 | -140.8 | -109.2 | 0.39 | 0.36 | 0.43 | 0.40 | -0.18 | -0.17 |
| Հարկային բեռ, % | 20.58 | 21.96 | 23.41 | 23.50 | - | | | | | |
| Հարկային բեռի փոփոխություն, տոկոսային կետ | - | 1.38 | 1.45 | 0.09 | | | | | | |

**Օգտագործված գրականություն**

1. Bunescu Liliana, Comaniciu Carmen, Factorial analysis of fiscal pressure in Romania: 2008 - 2011, Revista economică, Volume 65, Issue 1, Year 2013, Journal of economic-financial theory and practice, http://economice.ulbsibiu.ro/revista.economica/archive/65100revistaeconomica.pdf
2. http://armstat.am
3. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գործունեության տարեկան հաշվետվություն 2016

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏԻՆ, տեղեկատվական ամսական զեկույց Երևան 2017
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏԻՆ, տեղեկատվական ամսական զեկույց Երևան 2016
6. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գործունեության տարեկան հաշվետվություն 2015
7. ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գործունեության տարեկան հաշվետվություն 2014
8. ՀՀ ԿԱ ՊԵԿ տարեկան հաշվետվություն 2012
9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏԻՆ, տեղեկատվական ամսական զեկույց Երևան 2015
10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏԻՆ, տեղեկատվական ամսական զեկույց Երևան 2014
11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏԻՆ, տեղեկատվական ամսական զեկույց Երևան 2013

*Ներկայացվել է 12.12.2017թ.*
*Ընդունվել է տպագրության 26.12.2017թ.*